Արձանագրություն N 3
ՋԿ-ԳՀԾՁԲ-24/3-Ն ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 07 մարտի 2024թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Է. Բաղալյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Ասրյանը, Ն. Ավետյանը, Լ. Գալֆայանը և Ս. Աբազյանը
Քարտուղար՝ Ս. Գալստյան:

Մասնակից ընկերությունների կողմից ներկայացված շտկման փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար ոռոգման համակարգերում վերանորոգման (կառուցման) աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման ՋԿ-ԳՀԾՁԲ-24/3-Ն ծածկագրով ընթացակարգի մասնակիցներ **«Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ-ն**, **«ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ն, «Մոդուլ» ՍՊԸ-ն** և **«ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ-ն**՝ սահմանված ժամկետում ներկայացրել են գնահատող հանձնաժողովի 27.02.2024թ. թիվ 2 որոշմամբ արձանագրված անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերով մասնակիցներ **«ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ն, «Մոդուլ» ՍՊԸ-ն**, **«ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ-ն և «Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ-ն** 1, 3, 4, 5, 6 չափաբաժինների մասով շտկել են արձանագրված անհամապատասխանությունները: Մասնակից **«Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ-ի** կողմից շտկմամբ ներկայացված՝ «Նմանատիպ պայմանագրերը» չեն համապատասխանում ՋԿ-ԳՀԾՁԲ-24/3-Ն ծածկագրով հրավերի «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշով 2-րդ չափաբաժնի համար սահմանված «Նմանատիպ պայմանագրերի» պահանջներին (Սույն չափաբաժնի իմաստով նմանատիպ են համարվում ջրամբարների պատվարների կառուցման և (կամ) վերակառուցման և (կամ) վերականգնման նախագծային աշխատանքները, ՀՀ կառավարության 31.07.2003թ N 957-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան առնվազն երեք ջրամբարի անվտանգության հայտարարագրի (ԱՀ) կազմման ծառայությունները:):

Հանձնաժողովի որոշումը

ՋԿ-ԳՀԾՁԲ-24/3-Ն ծածկագրով ընթացակարգի մասնակիցների հայտերով ներկայացված (այդ թվում շտկմամբ) փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով ՋԿ-ԳՀԾՁԲ-24/3-Ն ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.10 կետը՝ մասնակից **«Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ-ի** 2-րդ չափաբաժնի հայտը մերժել:
2. ՋԿ-ԳՀԾՁԲ-24/3-Ն ծածկագրով ընթացակարգի 2-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ՋԿ-ԳՀԾՁԲ-24/3-Ն ծածկագրով ընթացակարգի 2-րդ չափաբաժնի համար անգործության ժամկետ է սահմանվում գնման ընթացակարգը (2-րդ չափաբաժինը) չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

3. ՋԿ-ԳՀԾՁԲ-24/3-Ն ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարել.
   - 1-ին չափաբաժին - **«ԴԵԼՏԱՇԻՆ» ՍՊԸ-ին,**
   - 3-րդ չափաբաժին - **«Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ-ին**,
   - 4-րդ և 6-րդ չափաբաժիններ - **«ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ին**,
   - 5-րդ չափաբաժին - **«Շինմաստեր» ՍՊԸ-ին:**
4. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ՋԿ-ԳՀԾՁԲ-24/3-Ն ծածկագրով ընթացակարգի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների համար անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

5. Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը ծանուցել ՋԿ-ԳՀԾՁԲ-24/3-Ն ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներ **«ԴԵԼՏԱՇԻՆ» ՍՊԸ-ին, «Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ-ին, «ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ին և «Շինմաստեր» ՍՊԸ**-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ	_____	Է. Բաղայյան
անդամներ	_____	Ս. Ասրյան
	_____	Ն. Ավետյան
	_____	Լ. Գալֆայան
	_____	Ս. Աբազյան
Քարտուղար	_____	Ս. Գալստյան